

Տեղեկատվություն
ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև
համագործակցության վերաբերյալ

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1.	Համագործակցություն Դիակոնիա բարեգործական հիմնադրամի հետ:	2014-2015թթ.	<p>Մարզի ղեկավարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Դիակոնիա բարեգործական հիմնադրամը մարզում իրականացնում է սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ազատամարտիկների ընտանիքներին ֆինանսական, սոցիալական աջակցության, բնակարանների վերանորոգման, ուսանողական վարձերի տրամադրման ծրագրեր: Առաջին եռամսյակում շահառու ընտանիքների թիվը 7 է, իսկ երկրորդ և երրորդ եռամսյակում դրանց թիվ հասել է 85-ի: Պարտիզակ, Ագարակավան, Կաքավաձոր, Աշտարակ համայնքներում իրականացվել են բնակարանի վերանորոգման, ուսման վարձավճարի հատկացման, բուժօգնության, սոցիալական խնդիրների օժանդակման և այլ ծրագրեր: Բոլոր ծրագրերը շարունակական են:</p>

2.	<p>Մանուկների հիմնադրամի (COAF) կողմից Արագածավան համայնքի թիվ 2 դպրոցում ճաշարանի կառուցում:</p>	<p>2014թ. ապրիլ-սեպտեմբեր</p>	<p>Մանուկների հիմնադրամի (COAF) կողմից Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի թիվ 2 դպրոցում կառուցվել է ճաշարան, որն ունի ժամանակակից պահանջներին համապատասխան հնարավորություններ:</p>
3.	<p>„Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի հետ համատեղ մանկապարտեզի կառուցում Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում:</p>	<p>2014 թ. փետրվար-նոյեմբեր</p>	<p>„Հայաստան,, համահայկական հիմնադրամի և Մեծ Բրիտանիայի տեղական մարմնի 87,5 մլն դրամ ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքում կառուցվում է մանկապարտեզ: 40 մլն դրամ համաֆինանսավորել է Սասունիկի համայնքապետարանը: Երկհարկանի մանկապարտեզն իր հարկի տակ կարող է ընդունել մինչև 90 երեխա:</p>
4	<p>ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագրի գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում համատեղ ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոցի ստեղծում մարզի սահմանամերձ գյուղերում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի</p>	<p>2014-2015թթ.</p>	<p>ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագրի գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի մրցույթում հավանության է արժանացել մարզի սահմանամերձ գյուղերում համատեղ ստեղծել ազգային նվազարանների պատրաստման վարպետաց դպրոց հիմնելու ծրագիրը:</p>

5.	<p>„Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, շրջանակում ներառական նախակրթարանի ստեղծում Թալին քաղաքում:</p>	2014թ. -2015թ.	<p>ՅՈՒՆԵՍԿՕ-ի „Մասնակցության ծրագիր գործունեության անդամ պետությունների համար,, ծրագրի շրջանակում „Թալինի կանանց ռեսուրս կենտրոն,, զարգացման հիմնադրամի կողմից Թալին քաղաքում ստեղծվելու է ներառական նախակրթարան, որն իրականացնելու է Թալինի տարածաշրջանում ուսուցողական սեմինարներ ծնողների համար, հոգեբանական, սոցիոլոգիական, առողջապահական, զբոսաշրջության թեմաներով ուսուցումներ, խորհրդատվություններ:</p>
6.	<p>Խաղաղության կորպուսի հետ համատեղ կամավորների ծրագրի իրականացում:</p>	2014թ.հունվար-նոյեմբեր	<p>Խաղաղության կորպուսի հետ համատեղ իրականացվում է կամավորների ծրագիրը, որի շրջանակում Ակունք, Աշնակ, Արագածավան, Ավանի և Աշտարակի դպրոցներում կազմակերպվում է լեզուների ուսուցում: Տեղի է ունեցել ճանաչողական այցեր, կատարվել է համայնքների կարիքների գնահատում, և ուսուցումը սկսվել է:</p>
7.	<p>„Վորլդ Վիժըն- Հայաստան,, կազմակերպության կողմից ֆիզիկայի փորձարարական լաբորատորիաների ստեղծում Թալինի թիվ 2, Աշնակի, Ն.Բազմաբերդի դպրոցներում:</p>	2014թ.ապրիլ-սեպտեմբեր	<p>„Վորլդ Վիժըն- Հայաստան,, կազմակերպության կողմից Թալինի թիվ 2, Աշնակի, Ն.Բազմաբերդի դպրոցներում ստեղծվել են ֆիզիկայի փորձարարական լաբորատորիաներ՝ յուրաքանչյուրը 1 մլն. դրամ արժեքով: Այցը կայացել է Ֆրանսիայի Բուրգ Լե Վալանս և ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքների միջև 2004 թ. կնքած փոխադարձ համաձայնագրի շրջանակում: Պատվիրակությունը գլխավորել է Բուրգ Լե Վալանսի սենատոր-քաղաքապետ Բեռնար Պիոսար:</p>

8.	Ֆրանսիայի Բուրգ լե Վալանս քաղաքի պատվիրակության այցը ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաք:	2014թ. 28 հունիսի	Այցի ընթացքում քննարկվել են համագործակցության շրջանակում իրականացվող առաջիկա խնդիրները:
9.	Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի պատվիրակության այցը ՀՀ Արագածոտնի մարզ:	2014թ. սեպտեմբերի 5	Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի պատվիրակությունը այցելել է ՀՀ Արագածոտնի մարզ: Պատվիրակությունը գլխավորել է Ալֆորվիլի քաղաքապետ Լուկ Կարվունասը: Պատվիրակության կազմում եղել են փոխքաղաքապետ Ռիշար Անանյանը, քաղաքապետարանի այլ պաշտոնյաներ: Մարզի ղեկավարության հետ քննարկվել են քույր համայնքներ Օշականի և Ալֆորվիլի միջև ընթացող համագործակցության երկուստեք հետաքրքրող հարցեր: Կատարվել է այցելություն Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց, որը վերանորոգվում է Ալֆորվիլի քաղաքապետարանի հովանավորությամբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել դպրոցի վերանորոգման հաջորդ փուլը:
10.	ՀՀ նախարարության, Արագածոտնի մարզպետարանի և „Ավանդական մշակույթի“ ՀՀ տոների	2014թ. սեպտեմբերի 11-15	ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և „Ավանդական տոների վերածնունդ,, կրթա-մշակութային ՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է „Հայաստանը խաղաղության խաչմերուկում,, 3-րդ միջազգային ֆուլկլորային փառատոնը, Հայկական

	<p>վերաճնունդ,, կրթա- մշակութային ՀԿ-ի նախաձեռնությամբ „Հայաստանը խաղաղության խաչմերուկում,, 3-րդ միջազգային ֆոլկլորային փառատոնի կազմակերպում:</p>		<p>խմբերի հետ մասնակցել են Լեհաստանի „Վիելկոպոլանիե,, եւ „Սզամոտուլի,, ֆոլկ խմբերը: Փառատոնը անց է կացվել Բյուրականի մշակույթի տանը, Աշտարակի Պերճ Պռոշյանի թանգարանում և Ուջանի Ֆիդայիների պուրակում:</p>
11.	<p>„Դիակոնիա,, բարեգործական հիմնադրամի կողմից բազմազավակ եւ սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանների վերանորոգման ծրագիր:</p>	2014թ. սեպտեմբեր- նոյեմբեր	<p>„Դիակոնիա,, բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվում է Շամիրամ եւ Ոսկեհատ համայնքներում ում բնակվող բազմազավակ և սոցիալապես անապահով 2 ընտանիքի բնակարանները:</p>
12.	<p>„Վորլդ վիժըն ինթերնեյշնը-,, կազմակերպության կողմից բուժամբուլատորիայի վերանորոգում Ձորագլուխ համայնքում:</p>	2014թ. սեպտեմբեր	<p>„Վորլդ վիժըն ինթերնեյշնը-,, կազմակերպության կողմից վերանորոգվել է Ձորագլուխ համայնքի բուժամբուլատորիան:</p>

13	<p>„Կամրջակ,, բարեգործական կազմակերպության կողմից Լուսազյուզ, Ոսկեհատ, Ագարակավան համայնքների մանկապարտեզներին գույքի տրամադրում:</p>	<p>2014թ. սեպտեմբեր-նոյեմբեր</p>	<p>„Կամրջակ,, բարեգործական կազմակերպության կողմից Լուսազյուզ, Ոսկեհատ, Ագարակավան համայնքների մանկապարտեզներին տրամադրվել է գույք:</p>
14	<p>Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեանի, պատվիրակության մամուլի և տեղեկատվության պատասխանատու Աննա Ազատյանի, Գերմանիայի դեսպանատան մշակութային, մամուլի և տնտեսական հարցերի բաժնի աշխատակից Աննմարի Կուլմանի հանդիպումը մարզպետ Սարգիս Սահակյանի հետ:</p>	<p>2014թ. սեպտեմբերի 25</p>	<p>Մարզպետարանում կայացել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեանի, պատվիրակության մամուլի և տեղեկատվության պատասխանատու Աննա Ազատյանի, Գերմանիայի դեսպանատան մշակութային, մամուլի և տնտեսական հարցերի բաժնի աշխատակից Աննմարի Կուլմանի հանդիպումը մարզպետ Սարգիս Սահակյանի հետ: Քննարկվել են Հայաստանում ԵՄ գործունեությանը, Արագածոտնի մարզում ԵՄ կողմից իրականացված ծրագրերին և արդյունքներին, առաջիկա ծրագրերին վերաբերող հարցեր:</p>